ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԲԱՆԱԿ

II

Բռնադրոսիկ, անբնական ու հնացած կարգեր են գերիշխում մեր գոյամասերում, նոխիսկ մի քանի ղեկավարներ ձգտում են կազմակերպել մի աւտոմատիկ բանակ, անենքնասէր, անզգայ մի կոյր ոյժ, որ մի շէյթանամիտ հրամանի ազդեցութեամբ, պատրաստ լինի ուինն ուզղելու թէկուզ մայրենի աշխատաւորի սրտին... յանուն մոնարխիզմի։

Զօրքն ուժասպառւում ու այլասերւում է, այս ժողովրդի հարազատ տարրերը հնարաւորութիւն չունեն զինւորական շրջաններում մնալ առանց հալածանքի ու վիրաւորանքի։

Եւ մի բան մինչև այժմ չպարզուեց. ինչ պիտի լինի հայ զինւորը տարաքարշ, սարկական, հլու կապկային քծնանքներով երերուն մի թշուառ մեքենայ-արարած, թէ քաղաքա[illegible] քաջութեամբ օժտուած ազատ ու ինքնավստահ [illegible] մունակ մարդ-կամք։

Զարա[illegible] ողովետեղ զինւորական գործը համարում է անմա[illegible] նքնասպասելի...

Մեր [illegible] նտեսական ոյժի մաքսիմումը վատնում է բանա[illegible]ր և յանցանք է, դաւաճանական յանցանք մ[illegible]ր ժողովրդի ջարդուած ուսերին ծանրացած նման բանակի ֆիզիքական ու բարոյական վիճակի վրայ նայել մատերի արանքով։

Եթէ անհնար է յեղափոխական կարգեր մտցնել այս անիծեալ երկրում, զէթ դեմոկրատիզմն էլ այսքան վայրագ ոտնձգութեամբ չպիտի նահատակւի։

Զօրքի շարքերը խտացնում է մեր անտեսապէս ուժասպառ և հոգեպէս քայքայած աշխատաւորութիւնը և այդպիսի զօրքը պիտի ծառայի միմբարն աշխատաւորութեան շահերին. լինի նրա հետ և ոչ նրա դէմ։

Մի զօրք, որ դաստիարակւում է սարկական մթնոլորտում, սարսափելի զրկանքների մէջ, բնականօրէն պիտի լինի ծոյլ ու վախկոտ և վտանգաւոր դէպքում դաւալից ու դաւաճան։

Ով ուզում է, որ մեր զօրքը այս և նման բարոյական այլանդակ պատկեր չներկայացնի նա չպիտի հանդուրժի բանակում տիրող բարբարոսական կարգերը։

Զօրքի շարքերից պիտի վտարել ռուս բիւրոկրատիզմի թոյնով վարակուած սպաներին ու պետերին, որոնք երէկ մեր պարտուել են պատճառների մէջ կարևոր տեղ գրաւեցին, իսկ այսօր, անվայել դաւադրութեամբ ձգտում են վտանգել մեր դեմոկրատիայի ազատն։

Զինւորի անհատ-քաղաքացիական իրաւունքները պէտք է վերականգնել և պետերի վայրագ ոտնձգութիւնները սանձել։

Յեղափոխական դեմոկրատական կարգեր պիտի մտցնել բանակում, սպայի և զինւորի իրաւահաւասարութիւնը, սրբագործել և վերջ տալ զինւորական կապկութիւններին։

Առանց այսպիսի անխուսափելի բարենորոգումների անհնար է կազմակերպել բանակ, իսկ եթէ կազմակերպւի էլ նման բանակ միայն չարիք ու պատուհաս կարող է հանդիսանալ այս երկրի և ժողովրդի գլխին։

Հեռակայ ու մերձակայ արիւնոտ ու ցաւագար անակնկալներից խուսափելու համար, մեր երկրի բոլոր գործօն ոյժերի օրւայ գերագոյն նշանաբանը պիտի լինի՝ վախճան դաւադրական քաղաքականութեան,

կեցցէ յեղափոխական բանակ։